ՍԻԼՎԱ ԱԼԼԱՀՎԵՐԴՅԱՆ

ՄԱՐԴՈՒ ԵՐԿՎՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՆԱՐԵԿԱՑՈՒ ԵՎ ՌՈՒՄԻԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ

«Բայց ասում եմ ձեզ. հոգո՛վ ընթացեք և մարմնի ցանկությունը մի կատարեք, քանի որ մարմինը հոգու հակառակն է ցանկանում, իսկ հոգին մարմնի:» (Աստվածաշունչ)

Ինքնաճանաչման ձգտումն ու ջանքերը միստիկի հոգում ծնում են նոր զգացումներ ու նրա առջև դնում ընտրություն կատարելու բարդ խնդիրներ: Օրինակ մարդու էության մեջ երկվության կամ «ամբիվալենտության» երևույթը առկա է հոգու և մարմնի միջև, ինչպես նաև անբաժանելի զգացումների դրականի ու բացասականի: Միևնույն առարկայի, անձի կամ երևույթի նկատմամբ առկա դրականն ու բացասականը արտահայտվում են տարբեր անտիթեզերի ձևավորմամբ: Սարդու էությանը չի հակասում այն, որ նույն պահին կարող է տիրել և լիարժեք դրականը և լիարժեք բացասականը, որոնք կողք-կողքի անբաժան են, վերածում են մեկը մյուսին: Ֆ. Նիցշեի բառերով ասած. «Այնքա՞ն սառը, այնքա՞ն սառցե, որ նրա վրա մատներդ կայրես: Ամեն մի ձեռք ցնցվո՞ւմ է, երբ հպվում է նրան: -Եվ դրա համար էլ ոմանք նրան շիկացած են համարում»[1]: Տվյալ խնդրի վերաբերյալ դժվար չէ գտնել նմանօրինակ մեկնաբանություններ արված այս կամ այն փիլիսոփայի կողմից: Իմամ Մուհամադ Ղազալին, պարսիկ անվանի փիլիսոփան ուսումնասիրելով մարդկային երկակի էությունը, գալիս է այն եզրահանգման, որ մարդկային էության մեջ առկա երկվության, կամ այլ կերպ ասած չարի ու բարու արմատները բխում են նրա մեջ հավասար ու համազոր գործող հրեշտակային ու սատանայական սկզբերից, որոնք, ինչպես արդեն նշեցինք անհրաժեշտ է ճանաչել ու ինքնաճանաչման միջոցով հնարավորինս տիրապետել հակադիր զգացումներին[2]:

Մեր կողմից ուսումնասիրվող երկու միստիկ բանաստեղծներին ևս հատուկ է մարդու երկբևեռվածության կամ ամբիվալենտության խնդիրը բոլոր

---

[1] Ֆրիդրիխ Նիցվշե. Բարուց և չարից անդին Հաստվածների մթնշաղ. Հակոբ Մովսեսի թարգմանությամբ. Երևան, 1992, էջ 62:

[2] Տե՛ս. ابو حامد امام محمد غزالی طوسی، کیمیای سعادت، چاپ اول، تهران، 1371
(Իմամ Մուհամադ Ղազալի. Քիմիա-յե-սաադաթ. հ. Ա. Թեհրան, 1371, էջ 22:)

մակարդակներում, սկսած մարմնի և հոգու փոխհարաբերությունից մինչև մարդկային ամենասովորական կողմերի դրսևորումը: Մարդ արարածն իր էությամբ բաղկացած է և՛ մարմնից և՛ հոգուց, և որ հողեղեն, աշխարհիկ մարդու մարմնում առկա են այնպիսի հույզեր ու կրքեր, որոնք ամեն պահ կարող են նրան մղել դեպի մեղսագործության ոլորտ և ապականել նրա հոգին: Այս խնդիրը միշտ էլ մարդկային միտքը զբաղեցնող թեմա է եղել, քանի որ մարդն անկատար էակ է, և նրա հոգին բնակվելով մեղսավոր մարմնի մեջ թաթախված է բազմաթիվ մեղքերի մեջ, և ապականված է երկրային կյանքի արատներով ու մարմնական ցանկություններով: Մարդ արարածն ըստ էության, կարծես թե ծնված է միայն մեղանչելու համար, քանի որ Նարեկացու բառերով ասած. նրա *«սիրտս նանրախորհուրդ, բերանս չարախաւս, ակնս յայրատատես, ականջս վրիպալուր, ձեռնս մահածիգ, երիկամունքս անփորձ, ոտնս մոլորաշավիղ, ընթացքս աներկիւղ, խորհուրդ ծորեալ, կամք անկայուն, չար անփոփոխ, բարեմասնութիւն սատանեալ»*[3]: Իսկ Ռումին ասես շարունակելով Նարեկացու միտքը հաստատում է.

گاه عاقی باشد او و گاه، شست	هر دو فعل هست در کاترین یک شخص
نیم او مومن بود، نیمش گبر	نیم او حرص آوری، نیمش صبر
همچو گاوی، نیمه چیش سیاه	نیمه دیگر سپید همچون ماه
هر که این نیمه ببیند، رد کند	هر که آن نیمه ببیند رد کند[4]

Քանի որ մի անձի մեջ երկու սկիզբն էլ կա,
[Նա] մերթ ծուկ է դառնում, մերթ հողային:
Նրա կեսը հավատացյալ է, կեսը հեթանոս
Կեսը ագահություն, կեսը՝ համբերություն:
Կովի նման, ձախ կողմն ամբողջությամբ սև է,
Իսկ մյուս կողմը լուսնի նման սպիտակ:
Ով այս կողմը տեսնի, կվանի [այս],
Ով մյուս կողմը տեսնի, կվանի [այն]:

Դժվար չէ նկատել, որ յուրաքանչյուր տողում առկա են սևն ու սպիտակը, չարն ու բարին, օրինականն ու անօրինականը. մեկը մյուսից անբաժան մաքուր հոգին ու անմաքուր մարմինը, որոնք անընդմեջ հակասում ու մերժում են իրար: Նարեկացու «Մատյանում» ակնհայտ հոգեբանական և գեղարվեստական հնարքներից են առատորեն սփռված երկվության բացահայտ դրսևորումներն ու արտահայտությունները: Այսպես ահա.

---

[3] Գրիգոր Նարեկացի, Մատյան ողբերգության, Աշխատասիրությամբ Պ. Խաչատրյանի և Ա. Ղազինյանի, Երևան, 1983, Բան ԾԶ-Ա:
[4] Ջալալ էդդին Մուհամադ Բալխի Ռումի, Մասնավի Մանավի, Թեհրան, 1990, երկրորդ գիրք, 604-608:

Ըմպանակք երկու յերկոսին ձեռին,
Մինն արեամբ, և միւսն կաթամբ,
Երկու բուրանոցք կայծակնաւորք,
Մինն խնկով, և միւսն ծենծերիւ,
Սկաւառակք կրկին կրաւորականք համոց,
Մինն քաղցու, և միւսն դառնութեամբ,
Բաժակք զոյգ առ երկու բերմունս,
Մինն արտաւսր, և միւսն ծծումբ,
Տաշտք կրեցեալք ի ծայրս մատանց,
Մինն գինի, և միւսն լեղի,
Դրունք տեսանելեաց ներհակաց,
Մինն ի լաց, և միւսն ի վրիպումն,
Խանութք հալոցականաց հակառակութեանց,
Մինն արծարծէ, և միւսն շիջուցանէ[5]:

Ուշագրավ է նաև այն փաստը, որ հակամետության այս օրինակը, մինչ Նարեկացին, իր յուրովի դրսևորումն է գտել դեռևս Ագաթանգեղոսի «Պատմության» մեջ. «Արդ ահա զոր կամիք ըմպել՝ պատրաստ է երկոքումբք ստուգութիւն ձեզ մատուցանել: Արբէ՛ք զիմաստութիւն և մի՝ զանմտութիւն, զողորմութիւն և մի՝ զբարկութիւն. զհաւատսն քաղցրութեան, և մի՝ զերկմտութիւն անհաւատութեան զայրիչ հրոյն չարութեան, որ տոչորէ ի գեհենի և ի խաւար տանի. այլ զհուր բաժակաց, որ լուսաւորեսցէ զձեզ յըմպելն ծերում զնա, և այրեսցէ զժանգ մեղաց տգիտութեան ծերոյ, և պահեսցէ զանձինս ձեր յուսով հաւատոց ծերոց: Առաքեալքն երանելիք արբին և արբեցան, և ուրախ եղեն. և արբուցին տիեզերաց երկու բաժակօք՝ որք կամեցան ըմպել զինչ կամեցանն: Արբոյց և ձեզ աւադիկ յիմարութիւն տգիտութեան, և խառնեաց աւադիկ ձեզ դեղ բաժակ մահու. առէք արբէք արդ հաւատքովք զբաժակն բժշկութեան կենաց անձանց ձերոց, զի փրկութեամբ ապրեսջիք յայրմանէն՝ որ գալոցն է»:[6]

Եվ Նարեկացու և Ռումիի պոեզիայում հակասությունները հաճախ հաստատվում են «երկու» լեքսեմով, երկու թիվը հենց սկզբից նախապատրաստում է իրարամերժության «տարափը» հոգեբանորեն ընկալելու և այդ անտիթեզը գիտակցելու: Այսպես, ահա՝

این سوم هست آدمیزاد و بشر نیم او ز آفرشته و نیمش خر[7]

Այս երրորդը, մարդն է, ադամորդին
Որի մի կեսը հրեշտակներից, իսկ մյուսը՝ ավանակից է [սերում]:

---

[5] Գ. Նարեկացի, նշվ. աշխ., Բան Լ-Գ:
[6] Ագաթանգեղոս, Պատմություն հայոց, Երևան, 1983, էջ 282:
[7] Ջ. Ռումի, նշվ. աշխ., չորրորդ գիրք, 1502:

կամ

نیمی حیوان، نیم حی با رشاد   ماند یک قسم دگر اندر جهاد
روز و شب در جنگ و اندر کشمکش   کرده چالش آخرش با اولش[8]

Մի կեսն անվերջ ջիհադի (պայքարի) մեջ է,

Նրա մի կեսը անասուն է, մյուս կեսը ճշմարիտ [աստվածային, Ս.Ա] ուղու ճամփորդ:

Օր ու գիշեր կռվի ու քաշքշուկի մեջ են

Սկիզբն ու վերջը՝ անվերջ մարտահրավերների:

Այս անտիթեզերը առկա են նաև Օմար Խայամին վերագրվող հետևյալ տողերում, որտեղ նույնպես ընդգծվում է մարդու մեջ երկվության գաղափարի գոյությունը՝ իրարամերժության, հակադրությունների սկզբունքը:

یک دست به مصحفیم و یک دست به جام   گه مرد حلالیم و گهی مرد حرام
ماییم در این گنبد فیروزه   نه کافر مطلق و نه مسلمان تمام

Մի ձեռքին գինի, մյուսում՝ Ղուրան

Մերթ հարամ ենք մենք, մերթ հալալ միայն,

Այսպես, փիրուզի այս երկնքի տակ,

Ոչ թունդ գյավուր ենք, ո՛չ զուտ մուսուլման[9]:

Երկբևեռության երևույթը, հակասականությունը ընդհանրապես, հատուկ է միջնադարյան մտածողին և զարմանալի չէ, որ Խայամը նույնպես կանգնած է ընտրության դիլեմայի առջև: Այս խնդիրն առհասարակ, անկախ ժամանակից բնորոշ է մարդկային մտածողությանը: Նման հոգեբանական իրավիճակ դժվար չէ գտնել նաև ուշ շրջանի հայ բանաստեղծների մոտ.

Սայաթ-Նովա՝

Վուրտիղ *հարսնիք*, վուրտիղըն *սուք*, վուրտիղ սոյբաթ խաղ է ըլում.
Վուրտիղ ժամ, վուրտիղ պատարաք, վուրտիղ սիրով տաղ է ըլում.
Թեվուր *հոքուտ* կամքն իս անում, *մարմինըտ* բեղամաղ է ըլում
Վո՞ւր մե դարդին կու դիմանաս, դուն ջըրա՛տար Սա՛յաթ-Նովա:[10]

Կ. Երզնկացի   Յոգիս է խիստ յօժար
         բանից իմաստնոց լըսել,
Մարմինս է հեշտասէր,
         զի յաշխարհէս է ինք ծընել,
Ի յերկուքիս միջին
         մոռ եմ՝ ի մէջ հըրոյն վառել,
Անհիմն ու անհաստատ

---

[8] Ջ. Ռումի, նշվ. աշխ., չորրորդ գիրք, 1531-1532:
[9] Օմար Խայյամ. Քառյակներ Գ, էմինի թարգմ., Երևան, 1993, էջ 39:
[10] Սայաթ-Նովա. Խաղեր, Երևան, 1987, էջ 55:

եմ անհանգիստ ի շուրջ եկել:[11]

Մարմնի և հոգու հարատև «մենամարտ». ուր հոգին բարձր ու վեհ աստվածային ոլորտում է, իսկ մարմինը՝ երկրային կյանքի ու մարմնական ցանկությունների: Այս անհաղթահարելի, հակասական իրավիճակում, ալեկոծվում է մարդու ներաշխարհը, խաթարվում է նրա հոգու անդորրը: Նարեկացու բառերով ասած. մարդ արարածը բնության մեջ կրում է «անթիվ-անհամար բծեր չարության», որոնք մարմնային օրենքներով հենց բողբոջում են միշտ, աճում, նորոգվում ամենատեսակ փշեր ընձյուղող մեր այս բնության անդաստանի մեջ. համաձայն անսուտ քո վկայության. թե «Մարդու միտքը մանկությունից հակամետ է միշտ չարիք գործելու»:»[12] Նույն զգացումներն ունի նաև Ռումին, երբ ասում է.

در میان بس نار و نور افراخته است — حق زمین و آسمان بر ساخته است
این زمیـــن را از بـــرای خاکیـــان — آســـمـــان را ممسکـــن افـــلاکیـــان
مرد سفلی، دشـــمن بـــالا بود — مشـــتری هر مکـــان پیدا بـــود[13]

Բարձրյալն արարել է երկիրն ու երկինքը,
Եվ դրանց [միջև] բավականաչափ լույս և կրակ դրել:
Երկիրն արարել է հողածինների՝
Երկինքը հրեշտակների համար:
Ստոր մարդը վերին երկնավորների թշնամին է,
Ամեն տեղի համար ակնկալողները [պարզ] երևում են:

Այս, և նման տողերը ակնարկում են հողածին մարդու երկու հիմնական անառարկելի և՝ քայքայվող ու ոչնչացող, և՝ փրկության արժանացող կողմերի առկայությանը: Նրանք մի անգամ ևս գալիս են ապացուցելու այն փաստը, որ լուսավոր ու մաքրագործված կողմի առկայության դեպքում, մարդ անկասկած կարող է մերձենալ Աստծու լույսին ու նրա երկնային շնչին:

Յորս է տեսանել ի մէջ արջնատես ագռաւուց՝ սպիտականիշ
երամս աղաւնեաց,
Ի մէջ խրոխտականաց ծիոց անմաքրից՝ որոջս հանդարտաբարս,
Ի թիւս շանց գազանականաց գառինս նուիրելիս,
Հեզութիւն ի խստութեան, կատարելութիւն ի թերութեան,
Խոնարհութիւն յամբարհաւաճութեան, ճշմարտութիւն ի ստութեան:[14]

---

[11] Կ. Երզնկացի, Տաղեր, Երևան, 1962, էջ 61-62:
[12] Գր. Նարեկացի, նշվ. աշխ., Բան ԺԵ-դ:
[13] Ջ. Ռումի, նշվ. աշխ., առաջին գիրք, 2387-2389:
[14] Գր. Նարեկացի, նշվ. աշխ., Բան ԼԱ-գ:

Ինչպես տեսնում ենք, այս հինգ տողերի մեջ խտացված են հակաթեզեր կենդանական աշխարհն արտացոլող սեմանտիկական դաշտում, որոնք գերազանցապես դրսևորում են օբյեկտ-հատկանիշ բինոմը (ագռավ-աղավնի, արջնաթույր-ծերմակ, անմաքուր-հանդարտաբարո, շներ-գառներ, գազանանման-նվիրյալ): Այլ կերպ ասած, բնության երկվության իրողությունը փաստ է, որը ձևավորում է Նարեկացու աշխարհընկալման մոդելը, որի դեմ երբեմն, նույնիսկ ըմբոստանում է հեղինակը, ստեղծելով դրամատիկական տրամադրություններ: Ըստ Նարեկացու, դժվար չէ գտնել երկու հակադիր ու իրարամերժ ուժերը կործանողն ու փրկողը՝ «միամտութիւն ի մանկութեան, անբծութիւն յայլամտութեան, բարաւորութիւն ի չարութեան, պարկեշտութիւն ի լկտութեան, ողորմութիւն՝ յանգթութեան, ապաշաւանք յանյուսութեան, քաղցրութիւն՝ ի բարկութեան, հաշտութիւն՝ ի թշնամութեան, անոխութիւն՝ ի խածանողութեան, քաջալերողթիւն ի լլկութեան, աւրհնութիւն ի նետածգութեան»[15].

Ինչպես նկատեցինք, և՝ Ռումին և՝ Նարեկացին տեսնում են մարդուն՝ իր աշխարհիկ ցանկությունների և կատարելագործման ձգանքերի «ներհակության» մեջ՝ Այդ երկու զգացումների մեջ էլ ձևավորվում են Նարեկացու և Ռումիի պոեզիայում «մարդու» կերպարը:

---

[15] Նույն տեղում, Բան ԼԱ-գ: